



105. ՍՈՒՏ ՄԵՌԵԼ

էրկու մարդ նստած կը զրուցեն, խոսք գընկնա վըր կնկտոց,
կն մեկ ուր կնիկ կը գովեր, թե հմա՛լ մեկ մե առի, օր մըջ ախշըրին
նա՛ էղեր է, նա՛ կէղնի. թե ինք մեռնի լե՛ էնի թաժա մարդ շառնե:

— Շատ աղեկ,— կըսե մեկել,— հմա շըմ ավտընա, շուրի
շը փորձինք:

— Ի՞մալ:

— Օր մե դու կէղնիս սուտ մեռել, ես գիկամ քու կնկան կը
մխիթարիմ, կըսիմ. «Հա՛րս, խո՛րբան, հերք է լաս, մարդ օր կա՛
քըսօր-վաղ պտի մեռնի, դու դըռ ջըհել իս, թաժա մարդ մե առ,
զքու դարդ ու ցավ կը մոռնաս»: Հը՞, ինչ կըսիս, փորձի՞նք:

— Ա՛րի փորձինք,— կըսե զկնկան գովող:

Օլոր օր մարդ գիկա տուն, ուրին կը դնե սուտ հիվընդութեն.
«Յամա՛ն իմ սիրտ իրիցավ, իմ փոր փուրթավ, իմ աչքեր կը մթըն-
դան»— կըսե, գընկնա գետին, սունչ կը թալի փոր: Կնիկ գիլա ու
կողրա, էդ վախտ մեկել մարդ ներս կը մտնա, կըսե.

— Հա՛րս, խո՛րբան, հերք է լաս, մարդ օր կա՛ քըսօր-վաղ պտի
մեռնի, դու դըռ ջըհել իս, թաժա մարդ մե առ, զքու դարդ ու ցավ
կը մոռնաս: Կըսիմ թե ես ու դու չիրար շա՛տ ույմիշ ինք:

— Չէ՛, հմալ բան չէ՛ղնի,— կըսե կնիկ ու էլման գիլա ու
կողրա:

— Է՛, աստված զհոգին լուսավորե, հող թեթև էղնի: Ես գացի,
հորելու վախտ՝ գիկամ:

Կնիկ դճառեջ կը կտրե:

— Յորի՞ն կէրթաս, մանցի, զմեռել հորինք, յետև իմալ ըսի՞ր՝
հմալ կէնինք:

— Օր հմալ է՛ խաբո՞ւլ իս:

— Խաբո՞ւլ իմ, — կըսե կնիկ:

Վըր էս խոսքին՝ սուտ մեռել պառկուկ տեղեն կը թռնա նստի.
կը ծիծղա՝ մեկել մարդ կըսե:

— Տեսա՞ր, իմա՞լ կը գովեր, մկա կավտընա՞ս, օր կնկա խոսք
վըր պաղին է գրուկ: — Դե՛, բարի վաչելում, — կըսե մարդ, կը
թորկե կէրթա ուր տուն:

